ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N3
ԳՀԾՁԲ-ԱԻՆ-19/87 ԾԱԾԿԱԳՐՈՎ ԳՆԱՆՇՄԱՆ ՀԱՐՑՄԱՆ ԳՆԱՀԱՏՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՀԱՅՏԵՐԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՆԻՍՏԻ
(Նյութական արժեքների գնահատման ծառայություն)

29 նոյեմբերի 2019թ.
ժամը 11.00

ք. Երևան

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ՝ ԳՊ/ԳԱՊ գնահատման պատասխանատու

Արմեն Գևորգյան՝ ԱԻՆ շենքերի, շինությունների պահպանման և տնտեսական վարչության պետի տեղակալ

Անդամներ՝ ԳՊ/ԳԱ գնահատող անձնակազմ

Գարիկ Բոյաջյան՝ փրկարար ծառայության թիկունքի և նյութատեխնիկական ապահովման վարչության պլանավորման, հաշվառման և վերլուծության բաժնի պետ.

Գոհար Մեսրոպյան՝ ֆինանսատնտեսագիտական վարչության հաշվապահական հաշվառման բաժնի պետ.

Անդամներ՝ ԳՊ/ԲԱ – բացող անձնակազմ

Գևորգ Ղահրամանյան՝ ԱԻՆ շենքերի, շինությունների պահպանման և տնտեսական վարչության գնումների կազմակերպման բաժնի հաշվառման մասնագետ.

Բացակայում էր՝ հանձնաժողովի անդամ

Արմենուհի Մկոյան՝ ԱԻՆ ֆինանսատնտեսագիտական վարչության ֆինանսաբյուջետային բաժնի պետ.

Հանձնաժողովի քարտուղար՝

Արմինե Գալուստյան՝ ԱԻՆ շենքերի, շինությունների պահպանման և տնտեսական վարչության գնումների կազմակերպման բաժնի գլխավոր մասնագետ.

1. Ընդունել ի գիտություն.

ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի /Կարգ/ 43-րդ կետի 3-րդ ենթակետի համաձայն՝ Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե /Կոմիտե/ հարցում է ուղարկվել «ԳՀԾՁԲ-ԱԻՆ-19/87» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի առաջին տեղը զբաղեցրած մասնակցի՝ Բագրատ Գինոյան Գարեգինի ԱՁ՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների վերաբերյալ:

2. Հանձնաժողովն արձանագրեց.

Կարգով սահմանված ժամկետում՝ Կոմիտեից ստացվել է դրական եզրակացություն, ըստ որի մասնակիցն ունի «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով սահմանված շեմը չգերազանցող հարկային պարտավորություն /կցվում է/:

3. Հիմք ընդունելով վերոգրյալը՝ հանձնաժողովը որոշեց.

3.1 Բագրատ Գինոյան Գարեգինի ԱՁ-ի հայտը գնահատել բավարար և ճանաչել Ընտրված մասնակից.

Ընդունվել է որոշում՝ կողմ 4, դեմ 0

3.2 Հաստատել ԳՀԾՁԲ-ԱԻՆ-19/87 ծածկագրով ընթացակարգի պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը (կցվում է):

Ընդունվել է որոշում՝ կողմ 4, դեմ 0

Հանձնաժողովի

նախագահ՝ _____ Ա. Գևորգյան

անդամներ՝ _____ Գ. Բոյաջյան

_____ Գ. Մեսրոպյան

_____ Գ. Ղահրամանյան

քարտուղար՝ _____ Ա. Գալուստյան